# Ժողովրդական արտիստ, կոմպոզիտոր և մանկավարժ

## ԳՐԻԳՈՐ ԵՂԻԱԶԱՐՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 105-ԱՄՅԱԿԸ



Գրիգոր Եղիազարյանը իսկական ժողովրդական կոմպոզիտոր է: Հենվելով մեր դասական երաժշտության նվաճումներին՝ նա ստեղծել է մի նոր արվեստ, խորիմաստ, արդիական, վեհաշունչ արվեստ, կենդանի արվեստ, իր ստեղծագործական ճանապարհին վարգացրել ու հարստացրել է մեր երաժշտական մշակույթը: Ազգային երաժշտական մշակույթի գանձերը, մանավանդ գեղջկական երգերը, իսկապես ստեղծագործաբար ժառանգելու գիտակցությունը առաջնորդեց Եղիազարյանին, որ նա ստեղծեր արվեստի իսկական արժեքներ, որոնք հոգևոր ամուր թելերով կապված են թե մեր դարավոր ավանդույթներին, թե մեր ժամանակի հետ:

Նա բազմահմուտ արվեստագետ է, որի երաժշտության մեջ անմիջականությունը, անկեղծությունը, պարզությունը, զուգակցվում են տեխնիկայի բարձր մակարդակին, պրոֆեսիոնալ մեծ վարպետությանը: Նրա ստեղծագործությունները, լինելով ծավալով մեծ թե փոքր, երգ թե սիմֆոնիա, դաշնամուրային պրելյուդ, թե սիմֆոնիկ պատկեր, փոքրիկ պիես թե մի ամբողջ բալետ, ունկնդրին գրավում են հարուստ մեղեդայնությամբ ու ջերմությամբ:

Սովետական Միության ժողովրդական արտիստ, կոմպոզիտոր և մանկավարժ Գրիգոր Եղիազարի Եղիազարյանը ծնվել է 1908 թվականին Իգդիր քաղաքի մոտակա Բլուր գյուղում: Նրա կենսագրությունը Արևմտյան Հայաստանում ծնված և Մեծ եղեռնի պարհուրելի աղետներին ենթարկված հայ մարդուն բնորոշ կենսագրություն է: Ծնողներից ու հարազատներից զրկված փախստական պատանին հայտնվում է Արևելյան Հայաստանում: Եվ այստեղ դեպքերի բերումով կատարվեց այն, ինչը բախտորոշ եղավ նրա հետագա կյանքում: Մի անգամ ուտեստ գտնելու հույսով թափառելիս, նա հայտնվեց զինվորական ինչ-որ ճամբարի մոտ: Նվագախմբի ձայն էր գալիս: Պատանին կպել էր ցանկապատին և չէր ուզում տեղից շարժվել: Նվագախմբի ղեկավարը նկատեց այդ և տղային վերցրեց խմբի կազմի մեջ որպես փողհար: Շուտով պատանի փողհարը ընդգրկվում է 11-րդ Կարմիր բանակի նվագախմբում: Այդպես տեղի ունեցավ ապագա կոմպոզիտորի երաժշտական մկրտությունը: Նրան հրապուրում էր բանակային սպայի կարիերան, դրա համար էլ մնաց զինծառայության մեջ: Տեղափոխվեց Թիֆլիս՝ հենց այդ զնդի նվագախմբում ծառայելու, իսկ 1926 թվականին զինվորական ուսումնարան ընդունվելու նպատակով մեկնեց Մոսկվա: Բայց այստեղ արդեն նրա հակումները երկփեղկվեցին: Սերը դեպի երաժշտությունը գնալով ավելի հաստատուն տեղ գրավեց նրա կյանքում:

1927 թվականին Եղիազարյանը ընդունվում է Մոսկվայի կոնսերվատորիայի կոմպոզիցիայի դասարանը, իսկ երեք տարի անց նա արդեն ստեղծագործական դասարանի սան էր: Քսանամյա շնորհալի երիտասարդը դառնում է ժամանակի ռուս հռչակավոր կոմպոզիտորների՝ Մյասկովսկու և Գլիերի աշակերտը: Խորաթափանց ուսուցիչները ճիշտ ուղղություն տվեցին աշակերտի տաղանդի զարգացմանը: Եվ երիտասարդի վաղ գործերում ի հայտ եկան հատկություններ, որոնք ստեղծագործական հետագա ճանապարհի մշտական ուղեկիցները եղան՝ գունագեղություն, մանրամասների մանրակրկիտ հղկվածություն, ձևի լակոնիզմ, բարձր ու նուրբ ճաշակ և, իհարկե, ազգային վառ ինքնուրույնություն: Խորապես ու խնամքով ուսումնասիրելով դասական երաժշտության ավանդույթները, հետազոտելով ու լիովին տիրապետելով ռուս երաժշտական կուլտուրայի առաջավոր փորձը, կոմպոզիտորը երբեք չխզեց կապը ժողովրդական երաժշտության, հայկական երգի հետ, որոնք սնեցին ու զարգացրին նրա տաղանդը:

Ստեղծագործական գործունեության առաջին տարիներին գրված "Ռապսոդիան" (սիմֆոնիկ նվագախմբի համար), "Երեք պարը" (դաշնամուրի համար) և "Սիմֆոնիկ սյուիտը" վկայում են արտասովոր տաղանդի մասին, մի կոմպոզիտորի, որը հիանալի զգում է նվագախմբի տարերքը, ձգտում է սիմֆոնիկ ժանրի, իսկ այնուհետև, ստեղծած ջութակի կոնցերտը, "Հայաստան" սիմֆոնիկ պոեմը, բալետային երաժշտությունն ու սյուիտները, "Արևածագին" սիմֆոնիկ պատկերը, "Սևան" բալետը ամրապնդեցին նվագախմբային երաժշտության նշանավոր վարպետի անունը:

Ավարտելով կոնսերվատորիան, Գրիգոր Եղիազարյանը վերադարձավ Հայաստան: Նախ Գյումրիում, իսկ այնուհետև Երևանի երաժշտական ուսումնարանում աշխատելուց հետո նա ավելի քան երեք տասնամյակ ղեկավարեց կոնսերվատորիայի ստեղծագործական դասարանը, իսկ 1946-ից մինչև 1960 թվականը գլխավորեց կոնսերվատորիան: Նա երկար տարիներ Հայաստանի կոմպոզիտորների միության նախագահն էր, ՍՍՀՄ կոմպոզիտորների միության վարչության անդամ:

Գրիգոր Եղիազարյանը անցել է ստեղծագործական հաջողություններով հարուստ ուղի: Նա հեղինակ է մասսայական-հերոսական երգերի, որոնք Մեծ հայրենականի օրերին հնչում էին ամենուր, և գործիքային ստեղծագործությունների, որ կայուն տեղ են գտել կատարողների նվագացանկում (հատկապես դաշնամուրային շարքերը) և վոկալ-կամերային գործերի, որոնց ցայտուն նմուշն է ժողովրդականությամբ ու նուրբ հույզականությամբ լի "Պաղ ջուր կուզար" երգը: Բայց Գրիգոր Եղիազարյանը, այնուհանդերձ, իրավամբ համարվում է սիմֆոնիկ երաժշտության, նվագախմբային գույների մեծ վարպետ: Բազմաթիվ են նրա սիմֆոնիկ գործերը, բազմաթիվ ու բազմաժանր: Նա հեղինակ է բալետների, ռապսոդիաների, ջութակի կոնցերտի, սիմֆոնիկ պոեմի, պատկերների և այլն:

Յուրաքանչյուր գործ կերտելիս վարպետը գտել է յուրահատուկ ուրույն բանալի տվյալ ստեղծագործության իմաստը բացահայտելու համար: Այսպես՝ "Արևածագին" սիմֆոնիկ պատկերն ստեղծելիս Եղիազարյանը դիմեց մեր ժողովրդական գործիքային երաժշտությանը: "Արևածագին" սիմֆոնիկ պատկերը մեր հոգևոր գանձերից մեկն է, որ ունկնդիրներին պարգևում է գեղագիտական հաճույքի սքանչելի պահեր: Այն խորապես բանաստեղծական հիմն է արևին, արևածագին և սովետական սիմֆոնիզմի աչքի ընկնող նմուշներից մեկն է, որը գրված է մեծ վարպետությամբ:

Սիմֆոնիկ մտածողություն ունեցող այնպիսի կոմպոզիտոր, ինչպիսին էր Գ. Եղիազարյանը, աշխարհընկալման իր տեսակետը, իր խոհերը, մտորումներն ու ընդհանրացումները պետք է որ արտահայտեր երաժշտության ամենակատարյալ ժանրով, բարդ, խորը և ընդհանրացնող ժանրով՝ սիմֆոնիայով: Եվ Եղիազարյանը գրեց իր "Հրապդան" սիմֆոնիան: Գրեց Հովհաննես Շիրազի համանուն պոեմի տպավորության տակ: Սիմֆոնիա՝ նաիրյան երկրի, հին ու նոր Հայաստանի մասին: Այս մոնումենտալ ստեղծագործությունը հարստացրեց հայ ազգային սիմֆոնիկ ժառանգությունը և իր արժանի տեղը գրավեց երաժշտական գանձարանում:

Գրիգոր Եղիազարյանի արվեստի վառ հատկություններից մեկը հոգեհարազատությունն է ժողովրդական երաժշտական ակունքներին: Կոմպոզիտորը, հաճախակի դիմելով ժողովրդական մեղեդուն, մշակում է այն յուրահատուկ, համարձակ, բանահյուսությունից վերցնելով ամենացայտունը, ամենավառը, հասցնելով պրոֆեսիոնալ արվեստի բարձրության: Այսպես պատահեց "Նուբար-Նուբար", "Սարերի հովին", "Շողեր ջան" և բազմաթիվ այլ պարզ ու անպաճույճ երգերի հետ, որոնց կոմպոզիտորը տվեց ժամանակի հնչեղություն, կատարելություն ու սիմֆոնիկ զարգացում: Այս և ուրիշ ժողովրդական մեղեդիների օգտագործումը հարստացրին ու յուրահատուկ գունավորում, փայլ ու շուք հաղորդեցին Եղիազարյանի "Սևան" բալետին, որը մի ռոմանտիկ պատմություն է երիտասարդության մասին, նոր էջ հայ բալետային արվեստում, ակնհայտ ներդրում հայկական բեմական երաժշտության մեջ:

Գրիգոր Եղիազարյանին հատուկ է պատկերավոր, ծրագրային մտածողությունը: Թերևս այդ հատկությունն է, որ նրան մղեց բեմական երաժշտությանը: Եվ այդ հատկության բյուրեղացման մեջ չէր կարող մեծ դեր չխաղալ նրա ստեղծագործական համագործակցությունը այնպիսի նշանավոր ռեժիսորի հետ, ինչպիսին Վարդան Աճեմյանն էր: Եղիազարյանը երաժշտություն է գրել Աճեմյանի բեմադրած "Խնդության սրինգ", "Գող շողոքորթը", "Էմանվել" "Պաղտասար աղբար" և այլ ներկայացումների համար: Եվ այստեղ էր, որ ի հայտ եկան կոմպոզիտորի բեմական զգացողությունը, կերպարային մտածողությունը: Դրա բարձրագույն արտահայտությունը եղավ նրա գրած երաժշտությունը Նաիրի Զարյանի "Արա Գեղեցիկ" ողբերգության համար, որտեղ երաժշտությունն արդեն դուրս է գալիս կիրառականի սահմաններից և դառնում ներկայացման ամենակարևոր գործոններից մեկը: "Արա Գեղեցիկի" թեման Եղիազարյանի մոտ ներկայացումից հետո էլ շարունակում էր խմորվել և տարիներ անց կոմպոզիտորի մտորումները այս ողբերգության շուրջը բյուրեղացան "Արա Գեղեցիկ և Շամիրամ" բալետում, մի մոնումենտալ գործ, որ հասուն տաղանդի, տարիներով մշակված վարպետության վառ ապացույց է: Եվ դրամատիկական կառուցվածքով, և ընդհանրացումների ուժով, և վառ թատերայնությամբ սա մի բարձրարժեք ստեղծագործություն է: Եղիազարյանի արվեստի բնորոշ առանձնահատկությունները այստեղ ավելի շեշտվել, ավելի խոսուն են դարձել: Երաժշտությունն այստեղ առավել կատարելության է հասել: Բացի այդ, թեմայից բխող նոր ոճական գծեր են ի հայտ եկել: Մի կողմից չոր, կոտրտվող ռիթմը, արևելյան երաժշտությանը բնորոշ ինտոնացիաներ, մյուս կողմից հայկական՝ մերթ զուսպ ու լակոնիկ, մերթ խիստ ու առնական, մերթ նուրբ ու քնարական: Բալետի երաժշտությունը հիանալի է արտացոլում հեթանոսական ժամանակի ծիսական պատկերները, կերտում ուժեղ, ցայտուն կերպարներ, առավել արտահայտված շեշտում ողբերգական գործողության ներքին լարումը, հասցնում բարձրակետի: "Արա Գեղեցիկ և Շամիրամ" բալետը մի ստեղծագործություն է, որ իր հզոր շնչով և հուզական ներգործությամբ կարող է եզակի տեղ գրավել ոչ միայն հայկական, այլև ամբողջ բալետային երաժշտության մեջ:

Իր մասնագիտությանն անսահմանորեն հավատարիմ կոմպոզիտոր Գրիգոր Եղիազարյանը, որի կյանքի նշանաբանն էր աշխատանքը, մահացել է 1988 թվականին, Երևանում: